

21. ԱՂՎԸՍՈՒ ՕՅԻՆՆԵՐ

Արջն ու Գելն ու Աղվեսն ու Լապստրակ կ'էղին ախբեր:

Կ'էլին, կէրթան, ինչ օր լկաշ-մկաշ գտին, կը բերեն իրարու հետ կիսեն, կուտեն:

Էն մեկ օր էտոնք կ'էլին կէրթան մըչ արտի մը բղիկ մի եղ կը գտնին՝ կառնին իգան:

Կըսե. - Ա՛րջ ախբեր, դու մե՛ծ ես, էդ բղիկ շալկա՛, բեր ուտենք:

Կ'էլին կիգան, կը բերեն էտ խերկեն ուրիշ խերկի մի մեչ կը պահեն:

Աղվես կըսե. - Ա՛րջ ախբեր, մըկա գարո՛ւն է, լկաշ-մկաշ կուտինք, էտի պահինք ձմռան բքուն, օր մեր իդարեն կը կըտրի՝ ուտենք:

Էտ աղվես հըմեն օր, հըմեն օր գողտուկ կը սազվի կ'էրթա էդ բղիկ եղ կուտե:

Էն մեկ օր ծուն կիգա, դուս կսառի:

Կըսեն. - Էրթանք, մզի բղիկ մի եղ կա, հանինք, ուտենք:

Կռվըտին, զիրար կը ծեծեն, էն կըսե՝ դո՛ւ ես կերի, էն կըսե՝ դո՛ւ ես կերի, կռվըտին:

Կը թալեն վըր Լապստրակուն, կը զանեն գլխուն, կը տանեն ուտեն:

Օրերուց օր մի Աղվես էլի կէրթա, մըչ գեղին հարսնիք է:

Կ'էրթա կը տեսնա վըր ճամբխին վզնոց մի, կը զանի չանգլներ ուր պոչեն, վզնոց կը կախվի մոտեն, կը տռճկա ու կիգա:

Կիգա, կըսե. - Ախբեր, էտ վզնոց հո՞ւստ էկավ, կախվավ քու պոչեն:

Կըսե. - Ես գացի զիմ պոչ դրի ջուր, էտ վզնոց էկավ կախվավ իմ պոչեն:

Գելն էլ ա, կ'էլի, կէրթա զուր պոչ չուր լուսու դեմ կը դնա ջուր: Պաղ կիգա զԳելու պոչ դահիմ կը ճընճռնա, կը պաղի մնա մըչ ջրին:

Շներ կիգան զէտ Գել կը ցվրնեն իրարուց, մնա Աղվեսն ու Արջ:

Կ'էլի էն մեկ օր, Աղվեսն է, լակաշ մի կը գտնե, կը դնե բերան, չփչալեն կիգա:

Արջն է կըսե. - Ախբեր, էդ ի՞նչ կուտես. մատմ էլ տու դնեմ իմ բերան:

Կըսե. - Արջ ախբեր, իմ աչն է՝ հաներ իմ, կուտիմ:

Կըսե. - Իմ աչն էլ հա՛ն, տուր ես ուտիմ:

ՁԱրջու մեկ աչ կը հանե, կիտա Արջ կուտե:

Օրերուց օր մի, էլմա զբերան կը չըփչըփացուցե կիգա:

Արջ կըսե. - Ա՜խ, Աղվես ախբեր, էտ ի՞նչ է կուտես:

Կըսե. - Իմ մեկել աչքն է, հաներ իմ, կուտեմ:

- է, - կըսե, - ախբե՛ր, դու օր քու աչք հաներ իս, կը տեսնի՞ս հարաչվան պես:

Կըսե. - Հա՛, լուս խորոտ կը տեսնամ:

Կըսե. - Ձիմ աչքն է, լա հան, ուտիմ:

Արջու էն մեկ աչքն է կիտա, կուտե:

Էն տեղ օր քար է, Արջուն կըսե՝ «Շուտ-շուտ վազե», էնգախ օր հող է, կըսե՝ «Հուշիկ քելա, քար է»:

Կը տանի խանա ծիլ պալի (ժայռ) մի քլուխ, կըսե. - Հըմալ դուրա՛ն է, հըմալ դուրա՛ն է, կը նմանի Օվայու դաշտ:

Արջ կուրախնա, տռճիկ մը կը զանե, կը վազե, պալեն կիյնա տակ, կէլնի խազար փշուր:

Աղվեսն է կը պռծի էտոր մոտեն: Կ'էլի կէրթա զարտի մի օրթալըխ, հերկեն կը պառկի:

Կը տեսնա օր խարսնիք մ' հըմալ ծանդր, գրան կիգա: Խարսնախուրեր կը վազին օր էտա Աղվես վերուն, դնին խարսի ձիու ետև:

Մեկ մարթ մի կըսե. - էտ խարսի ձին հուշիկ կը քելե, էտ Աղվես դրեք խարսի ձիու ետև:

Կըսե. - Խա՛րս, ի՞նչ կիտաս ընձի, օր չըսիմ՝ Խարս տռից, ձիու լոխթեն կտրավ, Աղվես փրթավ փախավ: Քու շորեր հա՛ն տուր ընձի, օր չըսիմ:

Խարս կըսե. - Դու իմ նամուսին թոխը՛ռմիլ մ'էղի, ինչ ուզիս՝ ես կիտամ:

Խարս կը տկլոզնա հոդի: Ձուր շորեր խեղճ-խեղճ կը խանա ու զուր բոխչեն կիտա Աղվըսու պառեկ:

Փշու մի դեն կէրթան, վոլա, Աղվես կը թռի տակ ծիուց:

Կըսե. - Խարս տռից, ծիու լոխթեն կտրավ, Աղվես փրթավ ու փախավ:

Աղվես փախավ ու ազատվավ: